ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած՝ ՀՀ Գեղարքունիք մարզի Վարդենիս համայնքի Մասրիկի տորֆի հանքավայրի՝ Գիլի-1 տեղամասի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցությա գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քնարկումների

2024թ-ի դեկտեմբերի 11-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մասրիկի տորֆի հանքավայրի՝ Գիլի-1 տեղամասի շահագործման նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քնարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի 2024թ-ի նոյեմբերի 9-ի հերթական համարում:

Հանրային քնարկմանը մասնակցում էին Տորֆավան բնակավայրի՝ բնակիչները, Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական՝ Ալիկ Եղիազարյանը և <<ՏՈՐՖ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Գուրգեն Հարությունյանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու, <<ՏՈՐՖ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Գուրգեն Հարությունյանին:

Գուրգեն Հարությունյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց, որ քնարկվող նախագիծը՝<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքնության, որի համար նախատեսվում է 2 հանրային լսում:

<<ՏՈՐՖ>> ՍՊ ընկերության տնօրեն Գուրգեն Հարությունյանը քնարկման մասնակիցներին ներկայացրեց շահագործվող հանքավայրի կառուցվածքային առանձնահատկությունները, նշելով, որ շահագործվելու է Գիլի-1 տեղամասի արևմտյան հատվածը՝ բաց եղանակով, 20 տարի նախագծային արդյունահանման համար և տարեկան արդյունահանվելու է՝ 6300 տոնա <<Ֆրեզերային տորֆ>>:

Քնարկմանը մասնակից բնակիչները իրենց հուզող հարցերը ուղղեցին <<ՏՈՐՖ>>ՍՊ ընկերության տնօրենին.

Հարց.՝

- Որ բնակավայրից են լինելու շահագործվող հանքավայրի աշխատողները:

Պատասխան.՝

- Հանքավայրի շահագործման դեպքում, բոլոր աշխատողները լինելու են Տորֆավան բնակավայրից:

Քնարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և Ալիկ Եղիազարյանը ավարտեց քնարկումը:

Քնարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<<ՏՈՐՖ>> ՍՊԸ տնօրեն Գ. Հարությունյան